ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1243-Ա «03» ապրիլի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի N604-Ն որոշման N 1 հավելվածի 5-րդ կետի 4-րդ ենթակետով, 40-րդ և 45-րդ կետերով՝

1.Երևանի քաղաքապետի շնորհակալագրերով պարգևատրել.

1) Փարիզ 2024 Պարալիմպիկ խաղերի հայկական խմբի ղեկավար Պատրիկ Օտամիանին՝ Փարիզ 2024 Պարալիմպիկ խաղերին հայկական թիմի նախապատրաստական աշխատանքներին և մասնակցությանն աջակցություն ցուցաբերելու համար,

2) Ամերիկահայ բարերար Նիկ Աղախանյանին՝ Փարիզ 2024 Պարալիմպիկ խաղերին հայկական թիմի նախապատրաստական աշխատանքներին և մասնակցությանն աջակցություն ցուցաբերելու համար,

3) Ֆրանսիահայ բարերար Պատրիկ Բոյաջյանին՝ Փարիզ 2024 Պարալիմպիկ խաղերին հայկական թիմի նախապատրաստական աշխատանքներին և մասնակցությանն աջակցություն ցուցաբերելու համար,

4) Պարաաթլետ Սմբատ Կարապետյանին՝ Փարիզ 2024 Պարալիմպիկ խաղերին պարաաթլետիկա մարզաձևից մասնակցելու և Հայաստանը բարձր մակարդակով ներկայացնելու համար,

5) Մարզիչ Հովհաննես Գևորգյանին՝ Փարիզ 2024 Պարալիմպիկ խաղերին որպես պարաաթլետիկա մարզաձևի մարզիչ մասնակցելու և Հայաստանը բարձր մակարդակով ներկայացնելու համար,

6) Մարզիչ Սուսաննա Մարտիրոսյանին՝ 2023-2024 թվականների ընթացքում պարաաթլետիկա մարզաձևը Երևան քաղաքում զարգացնելու և մասսայականացնելու գործում ունեցած ավանդի համար,

7) Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտեի փոխնախագահ, պարաձանրամարտի մարզիչ Գևորգ Հովհաննիսյանին՝ պարաձանրամարտ մարզաձևը Հայաստանում ու Երևան քաղաքում զարգացնելու և մասսայականացնելու գործում ունեցած ավանդի համար,

8) Վետերան պարաձանրամարտիկ, միջազգային կարգի սպորտի վարպետ Գագիկ Գասպարյանին՝ Հայաստանում ու Երևանում պարաձանրամարտի զարգացման գործում ունեցած ավանդի և հայկական պարաձանրամարտը հանրահռչակելու համար,

9) Ձեռներեց Սարգիս Բադալյանին՝ Փարիզ 2024 Պարալիմպիկ խաղերին պարաաթլետիկայի հավաքականի նախապատրաստական աշխատանքներին և մասնակցությանն աջակցություն ցուցաբերելու համար:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246